



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17349

1832

37

3-28

ԿՍ.ՆՈՆԱ.ԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ

„ՍԷՐ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

37
2-28

ՍՎՐԷԺ 2001
892.

Յարաձայնագրական պալատի Հայոց լուսնի

2010

37
Z-28

with

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ

„ՍԵՐ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

Handwritten signature

ԴԱՎՐԷԹ

1892.

Յառաջացողին պատրաստել չպետք է

ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

„ՍԵՐ“

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎՐԷԹ

1892.

ՀՅՂԶԵ - Կ. Զ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

„ՍԷՐ“

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



43.92-56

ՀՐԱԽԻՐ

ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ

„ՍԷՐ“

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ.

Յարգելի Հայեր.

Մեր ազգային բիւրաւոր ցաւերից ամենանշանաւորը և ամենիս մտատանջութիւն պատճառողն ամենայն ժամանակ՝ մեր գիւղացի, կամ աւելի լաւ է ասել, մեր գաւառաբնակ եղբայրակիցներին փոխութիւնը, խաւարամբտութիւնը, նրանց նախապաշարմունքներով և սնօտիապաշտութեամբ լի կեանքը և այդ վերջին երկուսի պատճառով յառաջ եկած տնտեսական վատթար դրութիւնն ու վաշխառուների ձեռքով կեղեքուիլն է . . . մի խօսքով՝ նրանց մտաւորական ո՛չ—յառաջադիմութիւնը և դարերով գոյութիւն ունեցող արձանական անշարժութիւնը:

Թիւնն է, որ միշտ նպաստում է զանազան ընտանեկան տխուր պատկերների և տեսակ — տեսակ աղքատութան ու աղքատորձան աղէտների շուտ — շուտ երեան գալու գործին . . . :

Հայ գիւղացին տգէտ է՝ բառի բուն նշանակութեամբ, նա՝ — իւր տգիտութեան պատճառով — միշտ ենթարկւում է թէ բնութեան և թէ չարամիտ մարդկանց հարուածներին, հարուածնե՛ր, որոնք նրան զրկում են իւր ընտանեկան խաղաղ կեանքից, որոնք գիւղացու երկաթէ մէջքը կտորում են և ձեռքը պանդխտական գաւազան տալով՝ խոկում դէպի օտարութիւն. ամենայն օր հայ գիւղացին սառնասրտութեամբ սպասում է իւր զլխին գալիք աղէտներին, չարիքներին և երբէք չ'է մտածում, չ'է ցնցում իւր ուղեղը այդ աղէտների և չարիքների առաջն առնելու համար միջոցներ գտնելու, նրա համար այդ անկարելի բան է, նա միանգամայն ընդմիշտ ա՛յն դադափարը և համոզմունքն ունի, որ չ'է կարելի ճակատագրի մէջ նշանակուած կէտերից շեղուիլ, չ'է կարելի ճակատագրին չ'հնազանդել: Խաւարամտութիւնը այնքան թանձրութեամբ է իւր սե վարագոյրներով նրա մտքի աչքերը փակել, որ նրան — գիւղացուն թոյլ չ'է տալիս գիտելու իւր շուրջը, թէ ի՛նչ է կատարւում այնտեղ. նա իւր ընտանեկան տխուր կեանքից, սե օրից բացի՝ ոչինչ չ'է տեսնում. նրա մտքի հորիզոնը շատ սահմանափակ է: Հայ գիւղացին ոչինչ բանի համար այնքան չ'է մտածում, նրա ամենազլխաւոր իդէալն է — ուրիշ կուլտուրան և քնել նշննպէս կուլտուրան. նրա մէջ չ'կայ գիտակցական կեանք, նրա մէջ զոյուժիւն ունի միայն ինստինկտը. ամենօրեայ

հոգսը նրա՝ մի կտոր հաց ուտելն է, ուրիշ ոչինչ. նա հաշար տեսակ չարչարանքներով աշխատում է միայն այդ նպատակին հասնելու համար . . . : Զէ կարելի որանալ այն բանը, որ հայ գիւղացին լսում է «լուսաւորութիւն» բառը, բայց դժբախտաբար չ'է տեսնում նրա սուած բազմակողմանի օգուտները, չ'է կարողանում ներան արժանանալ, որովհետև նրա միջոցները չ'են ներում նրան այդ քայլն անելու համար և նա յոյս չ'ունի, որ կարող է ինքն էլ լուսաւորուիլ, եթէ կամենայ, այդ նրա համար շատ ծանր է երեւում, նա սպասում է, որ մի քաղաքացի «լուսաւորուած» մարդ իրան առաջնորդի և այդ քայլն անել տայ, բայց այդ մարդն էլ դժուարութեամբ է գտնւում և նա յուսահատւում է բոլորովին:

Նախապաշարմունքը և սնտիապաշտութիւնը մեր գիւղացուն ամուր կերպով կաշկանդել են և նրա տնտեսականին բաւական մեծ վնասներ են հասցնում՝ աւելորդ ծախսերի մէջ ձգելով, մինչև անգամ նրա կեանքն աւելի շուտ են կարճացնում . . . : Գիւղացու ուղեղի և մտքի անշարժութեանը, նրա մտաւորական յետադիմութեանը մեծապէս նպաստում են այդ երկուսը, նրա միտքը պահում են միշտ սեղմուած և նրա մտքի առաջ կանգնելով կտրում են ա՛յն փրկարար ճանապարհը, որին նայելով և որի մէջ ընկնելով՝ գիւղացին պիտի գնայ դէպի ճշմարիտ լուսաւորութիւնը. իբրև անթափանցիկ պատ՝ թոյլ չ'են տալիս նրան խաւարից անցնելու դէպի լոյսը:

Քրիստոնէական ճշմարիտ Արօծի հետ խանութելով այդ երկուսը՝ հայ գիւղացու համար ստեղծում են մի այլ անանուն և խաօս կրօն, որի մէջ նա՝ — գիւղացին տես-

նում է ճշմարիտ Աստուծոյ գոյութեան հետ նաև դեբ-
րի, սատանաների և այլ այդպիսի բաների գոյութիւնը,
տեսնում է և երկու կողմին էլ համահասար կերպով
հաւատ ընծայում, երկու կողմին էլ պատշաճաւոր երկիւ-
ղածութեամբ և ակնածութեամբ է վերաբերվում, երկու
կողմի վրայ էլ յոյս է դնում: — Նա չէ կարողանում
ճշմարիտը բաժանել ստից:

Աւելորդ չի լինի այստեղ մատնացոյց անել և այն,
որ հայ գիւղացին չէ հասկանում ի՞նչ է ազգութիւն,
ի՞նչ ազգութեան է պատկանում ինքն և ի՞նչ բարոյա-
կան պարտականութիւն ունի կատարելու գէպի իւր
ազգը, նա չգիտէ ո՞րն է իւր հայրենիքը, ի՞նչ պատմա-
կան անցեալ է ունեցել նա և ի՞նչ հանգամանքների մէջ
է գտնվում այժմ, ո՞վ է եղել իւր նախահայրը և ովքե՞ր
իւր հայրենիքին իշխողները. — նրա համար մութն է
մնացել իւր ազգի պատմութիւնը . . . :

Նա՛ չգիտէ իւր մայրենի լեզուն ինչպէս որ հար-
կըն է, խօսում է աղաւաղուած լեզուով, նրա լեզուն էլ
Սրօնի նման մի խայտառակ խօսս է . . . : Մի երկու տող
գրելու համար նա դռն է դնկնում, սրան և
նրան է աղաչում, պաղատում և հաչիւ է կարողանում
իւր խնդիրը մի քանի տասնեակ կոպէկներ վճարելով կա-
տարել տալ անգրագիտութեան շնորհիւ յաճախ գրա-
մական մեծ պարտքերի տակ է ընկնում, երբ գործը ա-
նազնիւ վախճառուների հետ է ունենում և զուր պարտ-
քերի պատճառով յաւիտեան կորում կլանող պանդխ-
տութեան մէջ՝ կարօտ իւր որդիներից, կարօտ իւր ա-
մուսնուց ու ծնողներից . . . :

Հայ գիւղական տարրի մի մասը աւելի վատթար
գրութեան մէջ է գտնվում Պարսկաստանում և Տաճկաս-
տանում. այդ այն մասն է, որը բոլորովին զուրկ է հայ
լեզուից զանազան բաղաբական պատճառներով և խօսում
է պարսկերէն, քրդերէն կամ տաճկերէն. այդ մասը բիչ
— բիչ մոռանալով իւր հայ լինելն անգամ՝ տարիներ
ընթացքում ձուլվում է այլակրօն ազգերի մէջ:

Յարգելի Հայն՛ր, ահա՛ մեր եղբայրակից գիւղացի-
ների այժմեան գրութիւնը, գրութիւն, որը պտուղ է
տղիտութեան և խաւարամտութեան . . . :

Եւ մինչդեռ տղիտութիւնը, խաւարամտութիւնը,
նախապաշարմունքն ու մեծօրիակաշտութիւնը հայ գիւ-
ղացուն ձգում են զանազան կորստաբեր ճանապարհների
մէջ, գլորում են նրան սարսափելի անդունդների խորքը
և բաժնում ազգայնութիւն կոչուող մարմնից՝ մենք քաղա-
քացի Հայերս փոխանակ մեր գիւղացի եղբայրակիցներին
ազատ կացուցանելու գրանցից, նրանց կրթութեան գոր-
ծի համար մտածելու՝ մեզ ամենայն ժամանակ լուսաւոր-
ուած ենք համարում և սրտանց ուրախանում ենք մեր
այդ լուսաւորութեան վրայ, որը արագաբիւ է, իսկապէս
խաւարամտութիւն է և երեխայական ինքնախաբէութիւն:

Ասացէ՛ք, խնդրեմ, երբ մի ազգի մէջ կան երեւելի
հրապարակասուններ, վիպասաններ, բանաստեղծներ,
պատմաբաններ, լեզուագէտներ, գիտութեան զանազան
ճիւղի մասնագէտներ — իրաւաբաններ, փաստաբաններ,
բժիշկներ, բժշկուհիներ . . . , իրաւունք ունի՝ արդեօր
այդ ազգն իրան լուսաւորուած, քաղաքակրթուած և
չարգացած համարելու, երբ նրա լուսաւորութիւնը

բաղաբաղըթուծիւնը և զարգացումը սահմանափակվում է Տեւոն բաղաբացի բնակիչների մէջ, երբ այդ ազգութեան սակաւաթիւ մասի — քաղաքացիների և մեծամասնութեան — գիւղացիների կրթութեան գործի մէջ տեղը կանգնած է մի ահագին չինական պատ և չէ թողնում, որ այդ երկու նոյնազգի, բայց դժբախտաբար իրարից բաժանուած, եղբայրները մի և նոյն շաւղով, մի և նոյն ընթացքով գնան : — Ա՛յ : Այդպիսի դէպքում ազգն իրաւունք չունի երբէք իրան լուսաւորուած համարելու, մինչդեռ այդ լուսաւորութիւնը Տեւոնի աստեղի անհարկէն է պատկանում և իւր որոշ սահմանն ունի : դրան մենք, եթէ կարելի է այսպէս ասել, կ'կոչենք անհարկան և աստեղիկ լուսաւորութիւն, այլ ո՛չ թէ ընդհանուր ազգային լուսաւորութիւն :

Այդպէս ենք և մենք Հայերս :

Քաղաքացիներս եւրոպական ազգերի ուշադրութիւնն ենք դարձնում մեր վրայ ցոյց տալով նրանց մեր բազմալեզուագիտութիւնը, քաղաքագիտութիւնը, երաժշտական և բեմական բարձր ընդունակութիւնը, զեղարուեստական հմտութիւնը . . . , իսկ մեր եղբայրակից գիւղացիներն էլ զարմացնում են իւրաքանչիւր եւրոպական ճանապարհորդի իրանց խաւարամտութեամբ, տգիտութեամբ, նահապետական ձևի վար ու ցանքով, հազուատով, արհեստներից, կրթութիւնից զուրկ և Քրիստոնէական Արօնից անտեղեակ լինելով, իրանց լեզուի խռնաչփոթութեամբ, ընտանեկան տխուր երեւոյթներով և երբեմն էլ իրանց մի մասի վաշխառութեամբ մինչդեռ քաղաքացիներս զօրգեցնում ենք մեր դասախօսու-

թիւններով մինչև անգամ եւրոպական համալսարանների լայն սրահները՝ մեր գիւղացիներն էլ տեսնելով որ իրանց ազգակից քաղաքացիների ուշադրութեանն չ'են արժանանում՝ գրկաբաց վազում են դէպի նրանց, որոնք յանձն են առնում ուրախութեամբ նրանց որդոց կրթութեան սուրբ գործը կատարելու և (լսեցէք) հետու Ամերիկայից և Եւրոպայից եկած միսիօնարներից են սովորում իրանց մայրենի լեզուն՝ ՚ի հարկէ ոտն ու կողքը ջարդուած, պատմութիւնը և այլն : — Մե՛ծ պատիւ է մեզ համար :

Պարզ բան է, որ հայ մամուլը չ'էր կարող լուսմնալ այդ բոլորը տեսնելով և չ'մնաց. նա երկար և երկար հմտալից յօդուածներ և առաջնորդողներ ՚ի լոյս ընծայեց հայ գիւղացու մտաւորական և տնտեսական բարեփոխութեան համար, բայց դժբախտաբար շատ քիչ լսողներ և այդ հարցով հետաքրքրուողներ ունեցաւ, որովհետեւ ծանր և տաժանելի էր և է նրա — մամուլի դրած բարոյական պարտականութիւնը զաւտական զարգացած մասի մարդկանց — գլխաւորապէս երիտասարդներին՝ ո գաւառական ինտելիգենցիայի՝ վրայ : Սակայն չ'պէտք է ուրանալ մամուլի մատուցած ծառայութիւնից յառաջ եկած Տեւոնի երիտասարդական թարմ ուժերի երեւան գալը և նրանց գովելի գործունէութիւնը : Հայ մամուլի մէջ այդ հարցի շոշափուելուց յետոյ՝ դուրս եկան Տեւոնի գովելի և եռանդուն ինտելիգենտ երիտասարդներ և մտան գաւառական ազգաբնակչութեան մէջ՝ նրա ցաւերին զարման տանելու — կրթելու և լուսաւորելու համար, բայց, հարցնում ենք, ի՞նչ կարող են անել մի քանի այդպիսի ե-

ընտասարդներ իրանց գործ դրած ամենայն ճիգերով և
 ցոհողութիւններով, երբ նրանք հէնց առաջին բայլա-
 փոխում տեսնում են իրանց աչքերի առաջ Հայ աղգու-
 թեան մեծամասնութիւնը՝ բոլորովին խաւար, տգիտու-
 թեան մէջը խարխափող, զուրկ Հայ լեզուից, նախապա-
 շարմունքներով լին և օտարացած Հայութիւնից զանազան
 բաղաբաղան և դաւանական պատճառներով: — Այ՛ ինչ,
 մենք մեր կողմից կ'պատասխանենք այդ հարցին. նրանք
 վերջ 'ի վերջոյ կ'հետանան ասպարիզից՝ երբ կ'տեսնեն,
 որ ծանր է գործը, որ չ'կայ ակրուստի միջոց, ինչ որ
 ունէին գնաց և չ'ունին իրանց այդ սուրբ գործի մէջ ո՛չ
 բաջալերող և ո՛չ աջակցող. այդ ժամանակ կ'լինի նրանց
 համար յայտատուութիւն յայտատուութեանց ։

Գաւառացիները կամ Հայ աղգութեան ստորին խա-
 ւերի մէջ մտնելը շատ հեշտ է մի առժամանակ, երբ այդ
 գործ կատարողն ունի նիւթական կարողութիւն, բայց
 դժուարը դրա շարունակելն է, երբ ամենայն կողմից 'ի
 դերև կ'եննեն սպասելի փայլուն յոյսերը: — Աւերմն նախ
 պիտի միջոցները համար հոգանք և ապա՝ ինտելիգենցի-
 ային հրաւեր կարգանք:

Ընդհանրապէս չ'է կարող ինտելիգենցիային գործու-
 նէութեան մէջ դնել, նրան հարկաւոր է տալ միջոցներ,
 որ կարողանայ գիւղացուն կրթել, լուսաւորել, նրա մըտ-
 քի փակ աչքերը բաց անել, նրան պարտաճանաչ և գի-
 տակցական կենսութիւն տէր դարձնել:

Հայ գիւղացին Հայ ապիստ-ութեան հիմքն է, նա է իւր
 վրայ պահում ազգային շինքը. նրա ճիշդից պէտքէ հանել
 Կաթնախոզ և լուծող արարքը — արիստ-ութիւնը: Հայ գիւ-

ղացին Բերրի, Բայց անձնակ հողէ, պէտքէ նրա վրայ նոր
 Բոսնիա պատասխանելը Կաթնախոզ և նոր տերմէր յիշել.
 Կաթնախոզ իմոյ է, նրան կրկն-ութեան ճիշդոյով կարելի է
 ամեն պետակ յետ արիստ-ութիւն, նրան կարելի է համեմատել
 Կաթնախոզի ու հանգամանակները պիտի համեմատուի ներքին
 կերպով Բարեփոխել. . . :

Յոյց տալով ամենիս մտատանջութիւն պատճառող
 ազգային այդ մեծ և նշանաւոր ցաւը, նրանից յառաջ ե-
 կած չարիքները, նրա կազմալուծող յատկութիւնը, բա-
 ղաբացիներու լուսաւորութեան սահմանափակ և անհա-
 տական լինելը, մեր բարոյական պարտականութիւնը,
 ինտելիգենցիայի գործունէութեան արգելադրութիւնը և գա-
 ւառական Հայ աղգարնակութեան պէտքը՝ այժմ մենք գա-
 լիս ենք յայտարարելու 'ի գիտութիւն Հայ աղգութեան
 բոլոր անդամները, որ արդէն կազմուած է և գոյութիւն
 ունի Հայոց կրթական յ **ՍԷՐ** ընկերութիւնը, որի
 Վարչութիւնը հրաւեր է կարգում սրանով անդամակ-
 ցելու, նուիրութեամբ բաջալերելու և նիւթապէս ու
 բարոյապէս աջակցութիւն ցոյց տալու բոլոր այն Հայե-
 րին, որոնց սրտին շատ մօտ է և ուրախալի՝ տեսնելու
 իրանց եղբայրակից գիւղացիներին լուսաւորուած, բա-
 ղաբակրթուած, տնտեսականապէս բարւոքուած, հաւա-
 տարիմ իրանց Վրօնին, լեզուին, նրա գրագիտութեան
 մէջ վարժ և պատմութեան տեղեակ:

Հայոց կրթական յ **ՍԷՐ** ընկերութեան
 Ընդհանուր — Տնօրէն՝
 ՍԵՒ. ՄԻՐՁՈՅԵԱՆ.

Ծանօթ . Հայոց կրթական „**ՍԷՐ**“ Ընկերութեան անդամակցիլ ցանկացողները պէտք է դիմեն այս հասցէին՝

TAURIS (Pérese)

Comité d'Instruction arménienne „**SER**“

կամ՝

Դավրէժ (Պարսկաստան)

Հայոց կրթական „**ՍԷՐ**“ Ընկերութիւն .

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ „ՍԷՐ“ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆԳԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ .

- 1) . Հայոց կրթական „**ՍԷՐ**“ Ընկերութեան նպատակն է աշխատիլ Հայ չքաւոր տարրի մէջ տարածելու ուսումն, դիտութիւն (և երբեմն էլ արուեստներ) , նամանաւանդ գիւղական տարրի մէջ աշխատելու է , որքան կ'ներեն իւր նիւթական կարողութիւնները , բարձ 'ի թողի արած Հայ գիւղերում և մասամբ էլ քաղաքներում բաց անելու ուսումնարաններ և մատենադարան — ընթերցարաններ՝ ժողովրդական գրքերով — շատ անգամ տեղական ժողովրդի աջակցութեամբ — և այդ հաստատութիւնների

միջոցով արծարծելու է ուսման, զիտութեան, արուեստների և արհեստների նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը, մայրենի լեզուի և նրա գրադիտութեան պէտքը և սեպա կերպով կապելու է իւր բոլոր ջանքերով չայ զիւղական և քաղաքային տարրը իւր լեզուի և Արօն հետ:

Նպաստներ է տալու արդէն վաղուց դոյութիւն ունեցող, բայց նիւթականից զուրկ ուսումնարաններին ու մասնադասարաններին — ընթերցարաններին: Դողովրդական գրքեր է տարածելու իւր յարմար տեսած և պահանջ զգացած զիւղերում ու քաղաքներում:

» Այ՛ր « ընկերութիւնը թէ իւր բացելի և թէ արդէն դոյութիւն ունեցող զպրոցներում յանձն է առնում իւր անուամբ դաստիարակութեան տալու որք, անտէր և չքաւոր տղաներ ու աղջիկներ և հոգալու նրանց պիտոյքների մասին, բաւական է, որ նրանք հաստատութեամբ ցոյց տան իրանց որք, անտէր և չքաւոր լինելը:

2) . Արպէսզի չայոց կրթական » Այ՛ր « ընկերութիւնը կարողանայ պահպանել իւր դոյութիւնը և իրագործել իւր նպատակները՝ զիմելու է չայ աղքատութեան բոլոր անհատներին, որ բարեհաճին նրանք իրանց անդամական վճար-

ներով և նուիրատուութեամբ նպաստելու և քաջախիբելու չայոց կրթական » Այ՛ր « ընկերութեան իւր նպատակներն ու զործը յառաջ տանելու մէջ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ .

3) . Չայոց կրթական » Այ՛ր « ընկերութիւնը իւր բոլոր գործերը կատարելու համար ունենալու է Ա արչական անձինքների՝ Բ նդհանուր — Տնօրէն, Գ անձապահ և Վարտուղար իրանց հրեք օգնական — փոխանորդներով, և խորհրդական անդամներ, որոնցից առաջին հրեք հոգիները իրանց փոխանորդներով հանդերձ կընտարուին ընդհանուր ժողովից ձայնի առաւելութեամբ կամ զաղանի քուէարկութեամբ և կ'հաստատուին իրանց պաշտօններում Մարպատականի թեմի Ա իճակաւոր Մ առջնորդից, իսկ վերջինները՝ առաջիններից, որոնց թիւը լինելու է չորս:

4) . Ա արչական անձինք կ'ընտրուին միայն մի տարի պայմանաժամով, բացի Բ նդհանուր — Տնօրէնից, որի պաշտօնավարութիւնը կ'աւելիւրեք տարի:

5) . Ընկերութեան Ա արչութիւնը տարին մի անգամ ներկայացնելով իւր տեղեկագիրը ընդ-

Հանուր ժողովին՝ կ'հրաժարուին կամ կ'պարտա-
ւորուին հրաժարուելու Ա արչական անձինք-
ները, որոնք կարող են վերընտրելի լինել ընդ-
Հանուր ժողովի ձայնատու անդամների ³/₄ քուէ-
ով :

6) . Հայոց կրթական ՝ ՍԼԻՐ՝ ընկերութիւնը
իրան ՊԵՏՏԱՆՈՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՂ Է ճանաչում
Ատրպատականի թեմի Ա իճակաւոր Առաջնոր-
դին :

ԸՆԴՀԱՆՈՒՐ — ՏՆՕՐԷՆԻ ՊԵՐՏԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ .

7) . Բնդհանուր — Տնօրէնի պարտաւորութիւն-
ներն են՝ զիմել զանազան երկիրներում զտնը-
ւող բարեյոյս անձանց աջակցութեան և աւե-
լացնել ընկերութեան մուտքը, որը լինելու է
անդամական վճարները և կամովին նուիրատու-
թիւնները, ունենալու է թղթակցութիւններ
զանազան անձանց և լրագրերի հետ և յայտնե-
լու է տարին մի անգամ Հայոց կրթական ՝ ՍԼԻՐ՝
ընկերութեան արած գործերի և մտից ու ելից
հաշիւները :

Ղշգրիտ տեղեկութիւններ է ստանալու հայ
գիւղական կեանքի մասին և իմանալու ու ո-
րոշելու է գիւղերում դպրոցներ բանալու յար-

մար տեղերը, բարեկարգելու է գիւղերում և
քաղաքներում եղած դպրոցները և նշանակելու
է գիւղական ուսուցիչներ և ուսուցչուհիներ .
հոգալու է մատենադարան — ընթերցարանների
բարեկարգութեան մասին :

ԸՆԴՀԱՆՈՒՐ — ԺՈՂՈՎ .

8) . Հայոց կրթական ՝ ՍԼԻՐ՝ ընկերութիւնը
տարին և աւելի շուտ հարկ եղած ժամանակ վից
ամիսը մի անգամ Բնդհանուր — ժողով կ'ունե-
նայ մուտքը և ելքը քննելու, ընկերութեան վե-
ճակի վրայ տեղեկութիւններ ստանալու և ըստ
այնմ հարկ եղած ձեռնարկներն առաջարկելու ի
գործադրութիւն, ձայնատու նոր անդամներ ըն-
դունելու և կանոնադրութեան մէջ հարկ համար-
ուած փոփոխութիւնները մտցնելու : — Բնդ-
հանուր — ժողովին կ'մասնակցեն միայն ձայնա-
տու անդամները՝ իրանց ղիտողութիւնները և
տեսութիւններն ուղարկելով Բնդհանուր — ժո-
ղովին և կամ անձամբ ներկայ գտնուելով ու
վիճաբանութեան և քուէարկութեան մասնակ-
ցելով :

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ .

9) . Ըմեն մի հայ անհատ կարող է անգամ ճա-

նաչուել Հայոց կրթական « ՍՆՏ » ընկերութեան առանց խարութեան Արժի, Երևան և Երևանի բաւական է, որ նա յարգէ ընկերութեան կանոնադրութիւնը :

10) . Հայոց կրթական « ՍՆՏ » ընկերութեան անդամակցել ցանկացողները պիտի վճարեն իբրև անդամավճար տարեկան 12 դրամ, իսկ աւելի վճարողներ եթէ զանուի՛ն՝ կարող են մի անուան տեղ մի քանի անուններ դրել և հասցնել իրանց վճարները ընկերութեան կէսը անգամ զրուելիս և միւս կէսը երեք ամսից յետոյ կամ ամբողջը առաջուց վճարելով :

11) . Ընկերութեան ՊՍՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ կրկուցուին նրանք, որոնք միանուագ նիւթական մի նշանաւոր նպաստ կ'նուիրեն ընկերութեան (ոչ պակաս 30 խմանից կամ 100 ճանկից) կամ բարոյական մի մեծ ծառայութիւն կ'անեն նրա նպատակների համեմատ : ՊՍՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ընկերութեան կողմից վկայագիր կ'ուղարկուի : ՊՍՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ կարող են ընկերութեան անդամ չ'ըրուողներից էլ լինել :

12) . Նուիրատուներ նրանք կ'կոչուին, որոնք մի որ և է քանակութեամբ զումար կ'նուիրեն :

13) . Անդամներն կ'ստանան ընկերութեան կրն-

քով, Բնդհանուր — Տնօրէնի և Պանծապահի ստորագրութեամբ անդորրագրեր, երբ վճարած կ'լինեն տուրքը կամ նրա կէս մասը :

14) . Աթէ մի անգամ շարունակ տուրք չ'վճարի մի տարի առանց բանաւոր պատճառի և չ'վտասհեցնի տարուայ վերջն էլ վճարելով Բնդհանուր — Ժողովին կ'յանձնուի մի անօրինութիւն անելու նրա համար և եթէ հարկ համարուի՛ կարող է անդամակցութիւնից զրկուել :

15) . Նրաժարուած կամ հրաժարեցրած անդամն իրաւունք չ'ունի յետ պահանջելու իւր տուածը :

16) . Հայոց կրթական « ՍՆՏ » ընկերութեան ամեն մի անգամ պարտաւոր է տարածելու իւր շրջանում նրա զաղափարները, նպաստողներ գտնելու և աշխատելու է, որքան կ'ներեն իւր ժամանակն ու հանդամանքները, տեղեկանալու հայ զիւղական կեանքին և պահանջներին և տեղեկացնելու զայն Բնդհանուր — Տնօրէնին :

17) . Ընկերութեան մի որ և է անգամ կարող է նրա յառաջադիմութեան համար իւր խորհուրդներն ուղարկելու՝ երբ յարմար կ'տեսնի :

18) . Տարեկան Բնդհանուր — Ժողովին Բնդհանուր — Տնօրէնը



անդամ անել նրանց, որոնք ընկերութեան յառաջադիմութեան համար ունեցած են իրանց օգտակար գործունէութիւնը: Նոյնպէս մի որ և է ձայնատու անդամ իրաւունք ունի ՐՆդհանուր—ժողովին առաջարկելու իւր ծանօթ ընկերին ձայնատու անդամ ընդունելու համար: Այդ առաջարկութիւնը գրութեամբ էլ կարելի է անել, երբ առաջարկողն անձամբ ներկայ չ'է:

Չայնատու անդամը կ'ընդունուի ՐՆդհանուր—ժողովի ³/₄ քուէով:

ԳԱՆՁԱՅԻՆ ԱՒՃԱԿ .

19) . Հայոց կրթական «ՍՄԿ» ընկերութեան եկամուտներն են անդամավճարները և ամեն տեսակ նուիրատուութիւնները, որոնք կարող են լինել զրամ, արժեթուղթ, զրքեր, զանազան իրեղէններ և կտրուածներ, որոնք կամ կ'ուզարկուեն և կամ կտակ կ'լինեն ընկերութեան՝ զայն զօրացնելու և իւր նպատակին հասցնելու համար:

20) . Նուիրատուութիւնները կ'հրատարակուեն մի որ և է հայ թերթի մէջ, եթէ նուիրատուները արդեւ չ'դնեն:

21) . Ընկերութեան Ա արջութիւնը պարտա-

ւոր է անդամների ձայնի կամ քուէի առաւելութեամբ մի որ և է ՏէՅ կամ Կոպ գումար գործածել ընկերութեան նպատակի համեմատ, իսկ եթէ մնաց մի մասը բոլոր գումարից՝ զայն շահեցնել:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ .

22) . Ընկերութեան ժողովների և այլ ներքին գործերի համար մասնաւոր կանոններ կ'սահմանուեն:

23) . Ընկերութեան այս կանոնադրութեան մէջ ՐՆդհանուր—ժողովը կարող է ասրեղլին բարեփոխութիւններ մտցնել անդամների ձայնի առաւելութեամբ և առաջարկել ՚ի հաստատութիւն Ատրպատականի թեմի Ա իձակաւոր Առաջնորդին:




Faint, illegible text at the top of the left page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text in the middle of the left page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text in the lower middle of the left page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text at the bottom of the left page, possibly bleed-through from the reverse side.



Édition de la Commission des Travaux
Publiée par le Comité d'Administration
Paris, 1900

TABLIÉ (Table)

Comité d'Administration - S. R.

Paris, 1900

Imprimé par la Commission des Travaux

104

Յանկացողները կարող են ստանալ այս « Ա անոն ազրու թիւն ից » դիմելով հետևեալ հասցէին՝

TAURIS (Pérese)

Comité d'Instruction arménienne « SER »

կամ
Ղազըէժ (Պարսկաստան)

Հայոց կրթական « ՍԻՐ » Ընկերութիւն.

7013

« Ազգային գրադարան »
17389

NL0051152

